ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Վարչական գործ թիվ ՎԴ/1696/05/09
վարչական դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ ՎԴ/1696/05/09
Նախագահող դատավոր՝ Ռ. Հակոբյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
08 նոյեմբերի 2011 թվական ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը
(այսուհետ՝ Վերաքննիչ դատարան), հետևյալ կազմով

նախագահող դատավոր՝ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ
դատավորներ՝ ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ ԼԱՐԻՍԱ ՍՈՍՅԱՆ
Մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ՝ Կ. Մեժլումյանի
պատասխանողի ներկայացուցիչ՝ Գ. Թադևոսյանի

դռնբաց դատական նիստում քննելով «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականցման գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից բերած վերաքննիչ բողոքը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի հունիսի 20-ի վճռի դեմ, որը կայացվել է թիվ ՎԴ/1696/05/09 վարչական գործով՝ ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականցման գրասենյակ» ՊՈԱԿ-ի՝ կազմակերպության գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականցման գրասենյակ» ՊՈԱԿ-ի՝ կազմակերպության

գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին։
Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը (այսուհետ՝ Դատարան) 2011 թվականի հունիսի 20-ի վճռով հայցը բավարարել է։
Վերաքննիչ բողոքը բերել է «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը։
Վերաքննիչ դատարանի 2011 թվականի օգոստոսի 03-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ։
Վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել։
Դատաքննությունը հայտարարվել է ավարտված 2011 թվականի հոկտեմբերի 18-ին և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 2011 թվականի նոյեմբերի 08-ին։

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը
Բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.
Դատարանը խախտել է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, սխալ է մեկնաբանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի« 6-րդ հոդվածի 1-ին մասի« 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը։
Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.
Դատարանը կատարել է թերի քննություն՝ գործում առկա ապացույցները բազմակողմանի« լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել։
Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի տեղեկատվությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում։
Նույն Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն տեղեկատվություն տնօրինողը« բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի« մերժում է տեղեկատվությունը« եթե դա՝
1-ին կետի համաձայն պարունակում է պետական« ծառայողական« բանկային« առևտրային գաղտնիք.
Նույն օրենքի 2-րդ հոդվածով հստակ սահմանված է« որ եթե պահանջվող տեղեկատվության մի մասը պարունակում է տվյալներ« որոնց տրամադրումը ենթակա է մերժման« ապա տեղեկատվությունը տրամադրվում է մնացած մասի վերաբերյալ« հետևաբար անհասկանալի է հայցվորի դիրքորոշումը և առավել ևս հայց հարուցելը դատական ատյաններ« այն դեպքում որ օրենքը հստակ սահմանում է տեղեկատվության ստանալու կարգը և սահմանափակումները։
Բացի այդ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն տեղեկատվությունը ծառայողական« առևտրային կամ բանկային գաղտնիք է եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային

արժեք։ Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն տեղեկատվությունը« որոնք չեն կարող ծառայողական« առևտրային կամ բանկային գաղտնիք լինել սահմանվում են օրենքով։ Հայցվորի կողմից մատնանշված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում 8-րդ հոդված 3-րդ կետ հստակ նշում է այն տեղեկատվության ցանկը« որը չի կարող մերժվել« իսկ հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվությունը նշված ցանկում ընդգրկված չէ։
Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել ՀՀ վարչական դատարանի 20.06.2011թ. թիվ ՎԴ/1696/05/09 վճիռը։

3. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն 27.02.2009թ. «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին տեղեկատվություն ստանալու հարցում է ներկայացրել՝ խնդրելով հայտնել, թե
1. «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 և 2008թ.թ. որքա՞ն գումար է կազմել«

2. «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը 2006, 2007, 2008թ.թ.-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության և նկարագրության պայմանագրեր«
3. «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը 2006, 2007 և 2008թ.թ.-ին որքա՞ն հասույթ է ստացել հանձնարարության և նկարագրության պայմանագրերից.
2) «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի 06.03.2009թ. թիվ 38/01-322 պատասխան գրությամբ նշվել է, որ 1-ին կետով նախատեսված հարցի պատասխանը պաշտոնապես հրապարակվել է «ՀՀ պետական բյուջեի մասին» համապատասխան օրենքներում, իսկ 2-րդ և 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են առևտրային գաղտնիք, հետևաբար նման տեղեկատվություն չի կարող տրամադրվել։

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը եկավ եզրակացության, որ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան« ժողովրդավարական« սոցիալական« իրավական պետություն է։
ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը« նրա

արժանապատվությունը« հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են։
Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան։
Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք։
ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը սահմանում է« որ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք« հարգվում և պաշտպանվում է պետության կողմից։
ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը սահմանում է« որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք« ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու« ստանալու« տարածելու ազատությունը« տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից։
ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք։
ՀՀ Սահմանադրության վերը նշված հոդվածներով ամրագրված դրույթներով Հայաստանի Հանրապետությունն երաշխավորվում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան« այդ թվում տեղեկություններ և գաղափարներ փնտրելու« ստանալու« տարածելու ազատության իրավունքի պաշտպանությունը« ինչն ուղղակիորեն բխում է իրավական պետության սկզբունքից։

Նման երաշխիք է սահմանված նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածով« համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք։ Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու« տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից։
Սույն գործի փաստերի համաձայն՝ հայցվորը «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Հարությունյանին հասցեագրած «Տեղեկատվություն ստանալու հարցում» 27.02.2009թ. գրավոր հարցմամբ խնդրել է իրեն տրամադրել դրանում նշված տեղեկությունները։
«Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի 06.03.2009թ. թիվ 38/01-322 պատասխան գրությամբ հայցվորի 27.02.2009թ. հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չի տրվել« նշելով« թե 1-ին կետով նախատեսված հարցի պատասխանը պաշտոնապես հրապարակվել է «ՀՀ պետական

բյուջեի մասին» համապատասխան օրենքներում, իսկ 2-րդ և 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են առևտրային գաղտնիք, հետևաբար նման տեղեկատվություն չի կարող տրամադրվել։ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները« սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը« ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը« ձևերը և պայմանները։

Նույն օրենքի 3-րդ հոդվածում սահմանվել են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները« համաձայն որի՝ տեղեկությունը՝ անձի« առարկայի« փաստի« հանգամանքի« իրադարձության« եղելության« երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային« էլեկտրոնային փաստաթղթեր« ձայնագրություններ« տեսագրություններ« լուսաժապավեններ« գծագրեր« սխեմաներ« նոտաներ« քարտեզներ)« տեղեկատվություն տնօրինողը՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն են« պետական հիմնարկները« բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները« ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք։ Հայցվորի 27.02.2009թ. հարցմամբ պահանջվողը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է տեղեկություն։ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի 06.03.2009թ. թիվ 38/01-322 պատասխան գրությամբ հայցվորի 27.02.2009թ. հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը չի տրվել« նշելով« թե 1-ին կետով նախատեսված հարցի պատասխանը պաշտոնապես հրապարակվել է «ՀՀ պետական բյուջեի մասին» համապատասխան օրենքներում, իսկ 2-րդ և 3-րդ կետերով ներկայացված հարցերի պատասխանները պարունակում են առևտրային գաղտնիք, հետևաբար նման տեղեկատվություն չի կարող տրամադրվել։ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն։
Սույն գործի փաստերով ինչպես նաև «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի 06.03.2009թ. թիվ 38/01-322 պատասխան գրության բովանդակությունից ակնհայտ է, որ պահանջվող տեղեկատվության տնօրինողը հանդիսանում է «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը, հետևաբար վերջինս պարտավոր էր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-

րդ կետի պահանջին համապատասխան տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն։
Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում Վարչական դատարանի այն պատճառաբանությունը, որ. «...նշված պատասխանը հարցման 1-ին կետով պահանջվածին տրված պատշաճ պատասխան չի կարող որակվել« քանի որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով տեղեկություններ փնտրող անձին տրամադրել իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն։

Այսինքն՝ պատասխանողը« որպես պահանջվող տեղեկատվությունը տնօրինող« պարտավոր էր հայցվորին տրամադրելու տեղեկություն այն մասին« թե որքան գումար է կազմել Կազմակերպության ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 և 2008 թվականներին, այլ ոչ թե նրան ցույց տար «ՀՀ պետական բյուջեի մասին» համապատասխան օրենքների տեղը« հատկապես որ բոլորովին չէր բացառվում« որ հայցվորը գիտի դրա տեղը։»։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը։ Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում։
«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք։
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար։ Տեղեկությունները, որոնք չեն կարող ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով։
«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող« իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է« որն ստեղծվում է միայն մշակույթի« առողջապահության« սոցիալական« սպորտի« կրթության« գիտության« բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով։

Վերոգրյալ իրավանորմերի կանոնակարգմանը համապատասխան Վերաքննիչ դատարանը գտնում է, որ պետական ոչ առևտրային կազմակերպությունները հանդիսանալով շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն, ինչպիսին է նաև «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը« իր գործունեության ընթացքում առևտրային շահ չունի, հետևաբար դրա գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկություն չի կարող պարունակել առևտրային գաղտնիք։

Նշված վերլուծության համատեքստում Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում նաև Վարչական դատարանի այն պատճառաբանությունը, որ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկություն չի կարող պարունակել առևտրային գաղտնիք։ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է, որ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն։

Տվյալ դեպքում Վարչական դատարանը կիրառելով իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի նյութական իրավունքի վերը նշված նորմերը արել է ճիշտ եզրակացություն և դատաքննությամբ հաստատված է համարել հայցվորի տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստի առկայությունը« և գտել, որ հայցվող տեղեկատվության վերաբերյալ սպառիչ և լրիվ պատասխան չտալու «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործողություններն ոչ իրավաչափ ճանաչելու հայցվորի պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման« ինչն իր հերթին հիմք է հանդիսանում տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցնելու հայցը բավարարելու համար։

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Վարչական դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտությամբ գնահատել է բոլոր ապացույցները եւ կիրառել դրանց նկատմամբ կիրառելի իրավական ակտերը։ Անդրադառնալով դատական ծախսերի հարցին և հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ և 117.14-րդ հոդվածները, վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված։ Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 117.13-րդ և 117.14-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վերաքննիչ բողոքը մերժել՝ ՀՀ վարչական դատարանի 2011 թվականի հունիսի 20-ի թիվ ՎԴ/1696/05/09 վարչական գործով կայացրած վճիռը թողնել անփոփոխ։

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված։

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան։

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ԴԱՏԱՎՈՐ՝ ԴԱՏԱՎՈՐ՝
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ Լ. ՍՈՍՅԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ